ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 70

«19» 09 2022 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանին փոխադրելու և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ նշանակելու և վերջինիս պարտականությունների կատարումը Լիլիթ Սոսի Գրիգորյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ի՝ համապատասխանաբար N 336-Ա և N 337-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Սևակ Հովհաննիսյանի կողմից՝ Երևան քաղաքի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Լիլիթ Գրիգորյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Բաղդասարյան Գևորգ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Մկրտչյան Վաղարշակ - Երևան քաղաքի դատախազի տեղակալ,

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի

	պաշտոնակատար,
Նազարեթյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ,
Գևորգյան Թամարա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Վարդանյան Շողեր -	Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչության պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ